Հավելված 4
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
9 սեպտեմբերի 2024 թվականի N 344 -Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի հոկտեմբերի 10-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33 , 060 27 33 33 հեռախոսահամարներով:

ԴԵԲԵՏԱՅԻՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

	Քարտի տեսակ	Visa Gold	Visa Signature	Visa Infinite
1.	Քարտի արժույթ	ՀՀ դրամ, Եվրո, ԱՄՆ դոլար, ՌԴ ռուբլի		
2.	Քարտի թողարկում 2-5 բանկային օրվա ընթացքում[1]	անվճար		
3.	Քարտի գործողության ժամկետ	5 տարի		
4.	Քարտի շտապ տրամադրում[2] մեկ բանկային օրվա ընթացքում	5,000 ՀՀ դրամ		
5.	Քարտային հաշվի սպասարկման տարեկան վճար[3]	8,000[4] ՀՀ դրամ	69,900 ՀՀ դրամ	99,900 ՀՀ դրամ
6.	Քարտային հաշվի սպասարկման ամսական վճար[3]	700 ՀՀ դրամ	6,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ

---

[1] **Քարտի ակտիվացումը կատարվում է համաձայն Բանկի «Վճարային քարտերի սպասարկման» կանոնների (այսուհետ տեքստում՝ Կանոններ)՝ հետևյալ հղմամբ՝** Կանոններ **Բանկի բանկոմատների միջոցով:**

[2]**Քարտի շտապ տրամադրումն իրականացվում է միայն Բանկի Վարդանանց մասնաճյուղում: Հասցե. ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13, հեռախոսահամարներ՝ +37410 593333, +37460 273333:**

[3]Քարտի սպասարկման վճարը գանձվում է քարտային հաշվից, որի համար հիմք է ընդունվում տվյալ օրվա համար ԿԲ կողմից սահմանված փոխարժեքը: Ընդ որում, Քարտի պատվիրման ժամանակ, հաճախորդի ցանկությամբ, ընտրվում է քարտի սպասարկման տարեկան կամ ամսական վճարման տարբերակը:
IDBanking առցանց համակարգի կամ Idram&IDBank հավելվածի միջոցով պատվիրված քարտերի առաջին տարվա հաշվի սպասարկման վճարի համար կիրառվում է 20% զեղչ՝ տարեկան սպասարկման միջնորդավճարով պատվիրված քարտերի դեպքում: ՀՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդների կողմից արտարժույթային քարտ պատվիրելու դեպքում զուգահեռ բացվում է նաև նվազագույնը մեկ ընթացիկ հաշիվ՝ հաճախորդի կողմից նշված արժույթով:

[4] Սակագնի փոփոխությունը գործում է 21.06.2021թ-ից նոր պատվիրված քարտերի, ինչպես նաև 06.07.2021թ-ից սկսած ժամկետային վերաթողարկումների համար:

	Քարտի տեսակ		Visa Gold	Visa Signature	Visa Infinite
7.	Հաճախորդի՝ Բանկում ունեցած բոլոր հաշիվներով մեկ տարվա ընթացքում գործառնություն չիրականացնելու դեպքում (այսուհետ՝ ոչ ակտիվ հաշիվներ) տարեկան միջնորդավճար		5,000 ՀՀ դրամ[5]		
8.	Քարտային հաշվի չնվազող մնացորդ		չի սահմանվում		
9.	Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոսադրույք	Տարեկան պարզ տոկոսադրույք	0%	0%	
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	0%	0%	
10.	Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոսադրույք ՀՀ ոչ ռեզիդենտ հաճախորդների հաշիվների դեպքում	Տարեկան պարզ տոկոսադրույք	0%		
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	0%		
11.	Քարտի փոխարինում/վերաթողարկում՝ վնասված, շահագործման ոչ ենթակա, կորցրած/գողացած քարտի դեպքում (քարտի գործողության ժամանակահատվածում)		2,000 ՀՀ դրամ	24,900 ՀՀ դրամ	49,900 ՀՀ դրամ
12.	Քարտի փոխարինում՝ ժամկետից շուտ կամ ժամկետի ավարտին		անվճար[6]		
13.	Քարտի արգելափակում		անվճար		
14.	Քարտի ապաարգելափակում		անվճար		
15.	Քարտի մուտքագրումը միջազգային STOP ցանկ (7 օրով մեկ տարածաշրջանում)		10,000 ՀՀ դրամ		
16.	Քարտային հաշվի քաղվածքի ամենամսյա տրամադրում Բանկում կամ փոստի, էլ. փոստի միջոցով		անվճար		

[5]Սույն կետը տարածվում է այն հաճախորդների վրա, որոնք Բանկում ունեն միայն քարտային և ընթացիկ հաշիվներ, որոնցից որևէ մեկով մեկ տարի և ավել ժամանակահատվածում գործառնություններ չեն կատարվել և հաճախորդի բոլոր հաշիվների դրական մնացորդների հանրագումարը փոքր է 100,000 ՀՀ դրամից (կամ համարժեք արտարժույթից): Ընդ որում, գործառնություններ չեն համարվում հաշվի սպասարկման վճարի գանձումները կամ Բանկի կողմից իրականացված ներքին գործառնությունները, ինչպես նաև սառեցված հաշիվների միջոցները՝ սառեցված գումարի չափով: Սույն կետով նախատեսված միջնորդավճարը չի կիրառվում, եթե հաճախորդը Բանկում ոչ ակտիվ ընթացիկ և քարտից/քարտային հաշիվներից բացի ունի որևէ այլ Բանկային պրոդուկտ/ծառայություն՝ այդ թվում նաև սինքրոնացված Idram հավելված և/կամ idbanking.am առցանց համակարգ: Ոչ ակտիվ հաշիվների սպասարկման միջնորդավճարը կիրառվում է տարին մեկ անգամ՝ անկախ հաշիվների քանակից: Եթե ոչ ակտիվ հաշիվների մնացորդը փոքր է սահմանված միջնորդավճարից/համարժեք արտարժույթից, գանձվում է ամբողջ մնացորդային գումարը, որից հետո տվյալ հաշիվները կարող են փակվել Բանկի կողմից: Գանձված միջնորդավճարը վերադարձման ենթակա չէ:

[6]Քարտը ենթակա է ժամկետից շուտ կամ ժամկետի ավարտին անվճար փոխարինման, եթե քարտի գործողության ժամկետին մնացել է 3 ամիս և քիչ, հակառակ դեպքում գործում է տվյալ քարտատեսակի տեղեկատվական ամփոփագրով սահմանված վերաթողարկման/փոփոխման սակագինը

	Քարտի տեսակ	Visa Gold	Visa Signature	Visa Infinite
17.	Քարտային հաշվի քաղվածքի լրացուցիչ տրամադրում Բանկում կամ փոստի[7], էլ. փոստի միջոցով	1,000 ՀՀ դրամ		
18.	Վճար յուրաքանչյուր SMS-ի համար[8]	15 ՀՀ դրամ	անվճար	
19.	Վճար յուրաքանչյուր PUSH ծանուցման համար	անվճար		
20.	Կից քարտի տրամադրում	անվճար		
21.	Կցված քարտի սպասարկման տարեկան վճար	2,900 ՀՀ դրամ	24,900 ՀՀ դրամ	49,900 ՀՀ դրամ
22.	Քարտային հաշվի համալրում	համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված սակագնի		
23.	Միջնորդավճար քարտով Բանկի բանկոմատներից կանխիկի տրամադրման համար	0%՝ օրացույցային ամսվա ընթացքում մինչև 1,000,000[9] ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ[10]) ելքագրումների դեպքում 1%՝ օրացույցային ամսվա ընթացքում 1,000,000 ՀՀ դրամը (համարժեք արտարժույթ[10]) գերազանցող ելքագրումների դեպքում	0%՝ օրացույցային ամսվա ընթացքում մինչև 2,500,000[9]ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ[10]) ելքագրումների դեպքում 1%՝ օրացույցային ամսվա ընթացքում 2,500,000 ՀՀ դրամը (համարժեք արտարժույթ[10]) գերազանցող ելքագրումների դեպքում	0%՝ օրացույցային ամսվա ընթացքում մինչև 5,000,000[9]ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ[10]) ելքագրումների դեպքում 1%՝ օրացույցային ամսվա ընթացքում 5,000,000 ՀՀ դրամը (համարժեք արտարժույթ[10]) գերազանցող ելքագրումների դեպքում
24.	Միջնորդավճար Բանկի կանխիկացման կետերից(POS տերմինալ)կանխիկի տրամադրման համար	համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված սակագնի		
25.	Առանց քարտի օգտագործման քարտային հաշվից Բանկի կանխիկացման կետերից կանխիկացում	ըստ համապատասխան քարտատեսակի Բանկի կանխիկացման կետերից (POS տերմինալ) կանխիկի տրամադրման համար սահմանված միջնորդավճարի		
26.	Միջնորդավճար ԱրՔա համակարգի անդամ այլ բանկերի բանկոմատներից կանխիկի տրամադրման համար	0%՝ օրացույցային ամսվա ընթացքում մինչև 1,000,000[9] ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ[10]) ելքագրումների դեպքում 1%՝ օրացույցային ամսվա ընթացքում 1,000,000 ՀՀ դրամը (համարժեք արտարժույթ[10]) գերազանցող ելքագրումների դեպքում	0%՝ օրացույցային ամսվա ընթացքում մինչև 2,500,000[9] ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ[10]) ելքագրումների դեպքում	0%՝ օրացույցային ամսվա ընթացքում մինչև 5,000,000[9] ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ[10]) ելքագրումների դեպքում 1%՝ օրացույցային ամսվա ընթացքում 5,000,000 ՀՀ դրամը

7Քաղվածքի տրամադրումը ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս իրականացվում է Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրերով սահմանված պարբերականությամբ և եղանակով: Ընդ որում, ծառայության մատուցման համար Հաճախորդի քարտային հաշվին պետք է հասանելի լինի փոստային ծառայության և Բանկի համապատասխան սակագների մատուցման համար սահմանված միջնորդավճարի հանրագումարը:

8Ծառայությունը գործում է 500 ՀՀ դրամ/ 1 ԱՄՆ դոլար/1 եվրո/ 100 ՌԴ ռուբլի և ավել գործարքների համար: Սույն սակագինն ուժի մեջ է մտնում 15/03/2022թ-ից: Հաճախորդի ցանկությամբ հնարավոր է SMS ծառայության փոխարեն կամ վերջինիս զուգահեռ Բանկի Idram&IDBank հավելվածի միջոցով ակտիվացնել PUSH ծանուցման ծառայությունը:

9 Սույն սահմանաչափը վերաբերում է և՛ Բանկի բանկոմատներից կանխիկի տրամադրման, և՛ ԱրՔա համակարգի անդամ այլ բանկերի բանկոմատներից կանխիկի տրամադրմանը՝ միասին:

10 Արտարժույթով քարտերի դեպքում հիմք է ընդունվում գործարքի հաշվանցման օրվա փոխարժեքը:

	Քարտի տեսակ		Visa Gold	Visa Signature	Visa Infinite
				1%՝ օրացույցային ամսվա ընթացքում 2,500,000 ՀՀ դրամը (համարժեք արտարժույթ[10]) գերազանցող ելքագրումների դեպքում	(համարժեք արտարժույթ[10]) գերազանցող ելքագրումների դեպքում
27.	Միջնորդավճար ԱրՔա համակարգի անդամ այլ բանկերի կանխիկացման կետերից (POS տերմինալ) կանխիկի տրամադրման համար		1%		
28.	Միջնորդավճար քարտով ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող և արտերկրի բանկերի ԱԳՄ – ներից և կանխիկացման կետերից կանխիկի տրամադրման համար		1.5%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ[11]		
29.	Ոչ ռեզիդենտ հաճախորդների դեպքում միջնորդավճար քարտով կանխիկի տրամադրման համար (կանխիկացման բոլոր կետերով)		համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված սակագնի		
30.	Միջնորդավճար քարտից քարտ կատարվող փոխանցումների համար	բանկոմատների և ԱրՔա հավելվածի միջոցով	0.5%		
		IDBanking.am և Idram հարթակների միջոցով Բանկի՝ սինքրոնացում անցած քարտապանների քարտային հաշվից ԱրՔա համակարգի անդամների քարտերին փոխանցելու դեպքում	0.5%		
		IDBanking.am և Idram հարթակների միջոցով Բանկի՝ սինքրոնացում անցած քարտապանների քարտային հաշվից Բանկի այլ քարտերին փոխանցելու դեպքում	անվճար		
31.	Միջնորդավճար քարտով կատարվող անկանխիկ գործարքների իրականացման համար		անվճար		
32.	Կանխիկացման օրական սահմանաչափ		5,000,000 ՀՀ դրամ, 10,000 ԱՄՆ դոլար/ եվրո 500,000 ՌԴ ռուբլի		
33.	Կանխիկացման օրական սահմանաչափ ՀՀ ոչ ռեզիդենտ հաճախորդների համար		1,000,000 ՀՀ դրամ, 3,000 ԱՄՆ դոլար/ եվրո 150,000 ՌԴ ռուբլի		

[11] Բացի նշված սակագնից, կարող է գանձվել այլ միջնորդավճար՝ համապատասխան տվյալ կանխիկացման կետը սպասարկող Բանկի կողմից սահմանված սակագների:

	Քարտի տեսակ	Visa Gold	Visa Signature	Visa Infinite
34.	Կանխիկացման գործարքների օրական քանակը	10 հատ		
35.	Միջնորդավճար սահմանաչափերի ժամանակավոր կամ մշտական վերանայման համար	1,000 ՀՀ դրամ՝ համաձայն Բանկի ներքին որոշման		
36.	Քարտային հաշվի փակում և քարտի վերադարձ	անվճար		
37.	**Cashback** գնումներից[12]	0%	0.5%	
38.	**IDcoin գնումներից**[13]	0%	0,5%	
39.				
40.	**Privilege Banking** արտոնյալ բանկային ծառայություն	-	ներառված է	ներառված է
41.				
42.	Ճամփորդական ապահովագրություն[14]	-	անվճար	անվճար
43.	Օդանավակայանների բիզնես սրահների մուտք [15]	-	անվճար	անվճար

[12] Cashback վճարվում է, եթե մեկ վճարման գումարը 5,000 ՀՀ դրամ (ներառյալ) և ավել է: Սույն Cashback-ը չի վճարվում հետևյալ ոլորտների առևտրի և սպասարկման կետերում կատարված գնումների համար՝ հեռահաղորդակցման ծառայություններ, կոմունալ ծառայություններ, էլեկտրոնային փողեր, խաղադրույքներ, պետական մարմինների վճարումներ (հարկեր, տուրքեր և այլ վճարներ),բարեգործական հանգանակություններ, Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող այլ ծառայություններ :

Տվյալ ամսվա ընթացքում կատարված գործարքների համար Cashback-ը հաշվարկվում և վճարվում է հաջորդ ամսվա մինչև 5-րդ աշխատանքային օրը: Ընդ որում, փաստացի ստացման ենթակա Cashback-ը Քարտատիրոջը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը գանձելուց հետո:

[13] Բացի վճարվող Cashback-ից քարտով կատարված գնումների համար վճարվում է Idplus լոյալության հարթակի IDcoin միավորներ՝ համաձայն սույն տեղեկատվական ամփոփագրի 12-րդ ծանոթագրություններով սահմանված դրույթների: IDcoin հաշվարկվում և վճարվում է 01/06/2024թ.-ից կատարված գնումների դիմաց: Տվյալ ամսվա ընթացքում գնումների համար IDcoin-ի վճարումը կատարվում է մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխատանքային օրը: Փաստացի ստացման ենթակա IDcoin-ը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը գանձելուց հետո: IDcoin-ի տրամադրման համար օգտագործվում է Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարը: Ընդ որում, եթե Բանկում առկա չէ գրանցված հեռախոսահամար, կամ թերի է՝ IDcoin չի վճարվում: IDcoin-ի տրամադրման և օգտագործման կանոնները ներկայացված են հետևյալ հղմամբ:

[14] Ծառայության հասանելիությունը սահմանվում է Visa վճարային համակարգի կողմից:

[15] Օրացույցային տարվա ընթացքում անվճար մուտքերի քանակը սահմանվում է Visa վճարային համակարգի կողմից՝ տվյալ պահին գործող պայմաններով: Visa վճարային համակարգի կողմից սահմանված առավելագույն քանակը գերազանցելու դեպքում կգանձվի Visa վճարային համակարգի կողմից սահմանված միջնորդավճարը՝ յուրաքանչյուր հավելյալ այցելության համար: Քարտապանի ուղեկցորդները չունեն անվճար մուտքի հնարավորություն և պետք է վճարեն Visa վճարային համակարգի կողմից սահմանված միջնորդավճարը յուրաքանչյուր այցելուի և այցելության համար: Հիմնականում մինչև 2 տարեկան երեխաները կարող են քարտապանի ուղեկցությամբ անվճար մուտք գործել բիզնես սրահ (սահմանվում է սրահի կանոններով): Բիզնես սրահների այցելության պատմությունը, ինչպես նաև հատուկ առաջարկներին ծանոթանալու համար անհրաժեշտ է ներբեռնել համապատասխան հավելվածը և գրանցվել: Սահմանված միջնորդավճարը վճարելու դեպքում քարտապանի հետ բիզնես սրահ կարող են մուտք գործել նաև վերջինիս ուղեկցորդները՝ հիմնականում մինչև 6 անձ (առավելագույն անձանց քանակը սահմանվում է սրահի կանոններով), սակայն սրահ մուտք գործելու համար քարտապանի անմիջական ներկայությունը պարտադիր է: Ընդ որում, սույն կետում սահմանված քանակները և պայմանները կարող են փոփոխվել Visa վճարային համակարգի կողմից:

	Քարտի տեսակ	Visa Gold	Visa Signature	Visa Infinite
44.	Կոնսիերժ[16]	-	անվճար	անվճար
45.	Fast track[17]	-	անվճար	անվճար
46.	Visa Premium դասի քարտի այլ հավելյալ արտոնություններ	https://cis.visa.com/visa-in-armenia/visa-privileges.html		

Ընդհանուր պայմաններ

1. Բանկի քարտերը հաշվարկային են և նախատեսված են Քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում կանխիկացման, կանխիկի մուտքագրման և անկանխիկ գործառնություններ/գործարքներ իրականացնելու համար՝ Քարտապանի քարտային հաշվում առկա դրամական միջոցների և Բանկի կողմից տրամադրված վարկային գծի/օվերդրաֆտի հաշվին:
2. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
3. Կազմակերպությունների հետ աշխատավարձային քարտերի տրամադրման և սպասարկման սակագները սահմանվում են առանձին՝ համապատասխան պայմանագրերով:
4. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, ինչպես նաև այլ սակագները՝ դրանք ուժի մեջ մտնելուց 15 օր առաջ հրապարակելով Բանկի պաշտոնական կայքում:
5. Քարտային հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսները վճարվում են ամսական հաճախականությամբ:
6. Քարտային հաշվի գումարի նկատմամբ տոկոսները հաշվեգրվում են գումարը մուտքագրելու օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
7. Բանկին վերապահված է հաշվում եղած դրամական միջոցների դիմաց ստացված տոկոսներից օրենքով սահմանված կարգով եկամտահարկը (10%) հաշվելու և վճարելու հարկային գործակալի իրավունք:
8. Բանկի և հաճախորդի միջև ծագած վեճերը կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ Էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70-11-11 Ֆաքս՝ (+37410) 58-24-21:
9. *Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:*
10. *Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:*
11. SMS հաղորդագրության և էլեկտրոնային հասցեի ակտիվացման համար անհրաժեշտ է այցելել (անձը հաստատող փաստաթղթով) Բանկի ցանկացած մասնաճյուղ և լրացնել համապատասխան դիմում-հայտը:
12. Քարտը հաճախորդին տրամադրվում է քարտի պատվիրման հայտը Բանկ ներկայացնելուց և սպասարկման պայմանագիրը ստորագրելուց հետո 2-5 բանկային օրվա ընթացքում:

---

[16] Ծառայությունից օգտվելու համար հարկավոր է գրանցվել Telegram-ի IDBank concierge/ Visa Concierge -ում, անցնել նույնականացում և 24/7 ձևաչափով օգտվել կոնսիերժի ողջ հնարավորություններից:

[17] Ծառայության հասանելիությունը սահմանվում է Visa վճարային համակարգի կողմից: Ծառայությունից օգտվելու համար հարկավոր է գրանցվել Telegram-ի IDBank concierge/ Visa Concierge -ում, ընտրել համապատասխան ծառայությունը, լրացնել անհրաժեշտ տվյալները և ստանալ QR կոդով համապատասխան ֆայլը:

13. Առցանց պատվիրված (հատուկ դեպքերում Բանկի հայեցողությամբ նաև մասնաճյուղում պատվիրված) Քարտը կարող է առաքվել Երևանի տարածքում Հաճախորդի նախընտրելի հասցեով՝ Հաճախորդի քարտային հաշվին առաքման ծառայության համար անհրաժեշտ գումարի առկայության դեպքում, եթե Բանկի կողմից տվյալ պահին սահմանված է նման սակագին: Հեռավար նույնականացում անցած ՀՀ ոչ ռեզիդենտ հաճախորդների դեպքում հնարավոր է քարտի և ՊԻՆ կոդի ծրարի առաքումն իրականացնել ՀՀ տարածքից դուրս՝ գանձելով տվյալ պահին առաքման ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տվյալ ուղղությամբ առաքման համար սահմանած սակագինը:
14. Քարտի ակտիվացման և օգտագործման համար հաճախորդից կպահանջվի քարտը մուտք անել Բանկի բանկոմատ և ընտրել «Ակտիվացնել քարտը» կոճակը: Այնուհետև, SMS հաղորդագրության միջոցով, հաճախորդի՝ Բանկում գրանցված բջջային համարին կուղարկվի քարտի ակտիվացման մեկանգամյա կոդ, որը Բանկի բանկոմատում մուտքագրելուց հետո հաճախորդից կպահանջվի ստեղծել քարտի PIN կոդ՝ մուտքագրելով քառանիշ թիվ: PIN-կոդը պետք է օգտագործի միայն հաճախորդը, ինչպես նաև հաճախորդը պարտավոր է ապահովել PIN-կոդի հասանելիության անհնարինությունը այլ անձանց: Ակտիվացումը հնարավոր է կատարել ինչպես Բանկի, այնպես էլ ՀՀ տարածքի բոլոր այն բանկոմատների միջոցով, որոնցում առկա է նման հնարավորություն:
15. Բանկի կողմից Քարտն ակտիվացվում է Քարտը Քարտապանի կողմից ստանալուց և վերոնշյալ կետում սահմանված գործողությունները կատարելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:
16. Քարտով գործարքները հնարավոր է իրականացնել ինչպես քարտային հաշվի արժույթով, այնպես էլ քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով՝ տվյալ գործարքի օրվա համար Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
17. Գործարքի գումարը քարտային հաշվի արժույթի փոխարկելու արդյունքում փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
18. Բոլոր միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով: Արտարժութային քարտերի համար սահմանված միջնորդավճարները գանձվում են տվյալ գործարքի օրվա համար Բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքով:
19. Քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
20. Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
21. Բանկի և հաշվետիրոջ միջև վարկային պարտավորությունների առկայության դեպքում քարտային հաշվից դրամական միջոցները անակցեպտ գանձվում են վարկային պայմանագրով նախատեսված կարգով:
22. **Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ <u>էլ. փոստ կամ փոստային կապ</u>: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**
23. Հաշվի քաղվածքը ստանալուց 15-օրյա ժամկետում հաշվի հետ կապված գործառնություններում անճշտություններ հայտնաբերելու դեպքում հաճախորդը Բանկին կարող է ներկայացնել բողոքարկում: Նշված ժամանակահատվածում բողոքարկումները չստանալու դեպքում Բանկը քաղվածքը համարում է ընդունված: Բողոքարկումը ներկայացվում է Բանկին գրավոր դիմումի տեսքով: Սահմանված ժամկետում ստացված բողոքարկման դիմումը Բանկն ընդունում է կատարման՝ իրականացնելով տեղական և միջազգային վճարային համակարգի կանոններով սահմանված համապատասխան գործողությունները:
24. Քարտի կորստի դեպքում հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետում հեռախոսակապի միջոցով կամ այլ հնարավոր եղանակով տեղյակ պահի.
    - **«ԱրմենիանՔարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնին (010) 592222 շուրջօրյա հեռախոսահամարով կամ**
    - **զանգահարի Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն (+374 10) 59 33 33, (+374 60) 27 33 33, (+374 12) 33 33 33 շուրջօրյա հեռախոսահամարով կամ**
    - **անձնագրով այցելի Բանկի ցանկացած մասնաճյուղ**
    - **IDBanking առցանց համակարգի կամ Idram&IDBank հավելվածի միջոցով ինքնուրույն արգելափակի քարտը**

    Հաճախորդի կողմից քարտի կորստի մասին հեռախոսակապի միջոցով հայտնելու պահին քարտով գործարքների իրականացումը անմիջապես կկասեցվի:
    Բանկը պատասխանատվություն չի կրում քարտապանին հասցրած այն վնասի համար, որը կատարվել է քարտը կորցնելու և Բանկ հայտնելու միջև ընկած ժամանակահատվածում: Քարտի գործողության կասեցումից հետո հաճախորդը պետք է այցելի Բանկ կամ Հեռախոսազանգի միջոցով ներկայացնի քարտի կորստի մասին գրավոր դիմում, որի հիման վրա Բանկը հաճախորդին 2-5 բանկային օրվա ընթացքում կտրամադրի նոր քարտ: Մանրամասն տես Բանկի «Վճարային քարտերի սպասարկման կանոններում»՝ հետևյալ հղմամբ՝ **Կանոններ:**
25. Ժամկետից շուտ քարտի սպասարկումը դադարեցվում և քարտային հաշիվը փակվում է քարտատիրոջ գրավոր դիմումի համաձայն: Քարտային հաշվի մնացորդը վերադարձվում է հաճախորդին՝ ՝ համաձայն դիմումում նշված պայմանների: Քարտը ենթակա է վերադարձման Բանկ:
26. **Ուշադրություն. Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա հաճախորդը՝ իր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝ Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:**
27. Տոկոսագումարների հաշվարկի օրինակ.

Քարտին գումարը մուտքագրելու օրը՝ 01.08.2018թ.

Քարտ մուտքագրված գումարը՝ 100,000 ՀՀ դրամ

Տարեկան տոկոսադրույքը՝ 4%

Տոկոսագումարի վճարումը՝ ժամկետի վերջում

Քարտին գումարը մնալու ժամկետը՝ 365 օր

Եկամտային հարկի դրույքաչափը՝ 10%

Հաշվարկված տոկոսագումարը՝

100,000 x 4% : 365 x 364 = 3989.04 ՀՀ դրամ

Եկամտային հարկի գումարը՝

3989.04 x 10% = 398.90 ՀՀ դրամ

Քարտապանի ստացած եկամուտը՝

3590.14 ՀՀ դրամ

28. Կից քարտի տրամադրում.
    - Քարտապանը (Հիմնական քարտապան) կարող է իր քարտին (հիմնական քարտ) կից Բանկից ստանալ հավելյալ քարտ(եր) ինչպես իր համար, այնպես էլ երրորդ անձի համար:
    - Կից քարտը կարող է տարբեր լինել հիմնական քարտի տեսակից, սակայն պետք է քարտի դասով լինի հիմնական քարտին հավասար կամ ավելի ցածր դասի:
    - Կից քարտով կատարվող գործարքները հաշվառվում և արտացոլվում են հիմնական քարտի քարտային հաշվում:
    - Հիմնական քարտապանը Բանկին գրավոր դիմում ներկայացնելով՝ կարող է սահմանել կից քարտի համար կանխիկացման օրական սահմանաչափեր, գործարքների և կանխիկացման գործարքների օրական քանակի սահմանաչափերը:
    - Հիմնական և կից քարտերով իրականացված բոլոր գործարքների արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները հանդիսանում են Հիմնական քարտապանի պարտավորությունները:
    - Կից քարտի վերաթողարկման դեպքում համաձայնություն կարող է տալ Հիմնական քարտապանը, ինչպես նաև կից քարտի քարտապանը:
    - Հավելյալ քարտապան(ներ)ը պարտավորվում է(են) տեղեկացնել Բանկին Հիմնական քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկության դեպքերում և չօգտագործել քարտը նման տեղեկատվություն ունենալու դեպքում:
29. Այլ բանկերի բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացման ժամանակ սպասարկող բանկի կողմից կարող են կիրառվել հավելյալ միջնորդավճարներ:
30. Այլ բանկերի բանկոմատներից քարտից քարտ կատարվող փոխանցումների ժամանակ սպասարկող բանկի կողմից կարող է գանձվել հավելյալ միջնորդավճար:
31. Վիրտուալ միջավայրում Բանկի կողմից թողարկված վճարային քարտերով գործառնությունների իրականացման ժամանակ կիրառվում է 3D Secure տեղեկատվական անվտանգության համակարգ: Քարտով գործառնություն իրականացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վճարային համակարգերի կողմից հաստատված տարբերանշաններին (Visa-ի դեպքում VerifiedbyVisa,): Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ պատճառով 3D Secure անվտանգության գաղտնաբառ չստանալու և դրա արդյունքում գործարքը խափանվելու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:
32. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ **Մասնաճյուղեր և Բանկոմատներ:**
33. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են **«Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:**
34. Վճարային քարտի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ.
    - ✓ անձը հաստատող փաստաթուղթ
    - ✓ հանրային ծառայությունների համարանիշ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք
35. Քարտի օգտագործման, պահպանման, փակման, վերաթողարկման, անվտանգության ապահովման, քարտով գործարքների բողոքարկման վերաբերյալ այլ դրույթները, որոնք սահմանված չեն սույն տեղեկատվական ամփոփագրում, սահմանված են **Կանոններով,** Բանկի կողմից վճարային քարտի թողարկման, տրամադրման և սպասարկման հետ կապված Բանկի և Քարտապանի միջև կնքվող պայմանագրով, ներքին իրավական ակտերով, և վճարահաշվարկային համակարգերի (ԱրՔա, Visa, Mastercard) կանոններով:
36. Բանկը պարտավոր է հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս վերջինիս տրամադրել Կանոններ:
37. Հաճախորդը չպետք է ներառված լինի Բանկի անցանկալի հաճախորդների ցանկում: Բանկի անցանկալի հաճախորդ դասակարգելու վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են «Բանկի կողմից հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և նրանց հետ հարաբերությունների կառավարման վերաբերյալ» ընթացակարգով:

38. Քարտային հաշվում առկա միջոցների վերադարձելիությունը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝				
Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժու-թային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Լրացուցիչ պայմաններ պրեմիում դասի VISA Signature և VISA Infinite քարտերի համար

1. Անվճար միջազգային կոնսիերժ ծառայություն. 24/7 շուրջօրյա տեղեկատվության տրամադրում, տոմսերի ամրագրում և այլ ծառայություններ՝ անձնական օգնականի միջոցով:
2. SpeedPass ծառայություն. Ուղեկցում օդանավակայաններում՝ օդանավից մինչև ավտոմեքենա և հակառակը, վիզա ստանալու աջակցություն տեղ հասնելուն պես և այլն:
3. Բոլոր օդանավակայաններում բիզնես սրահների մուտքի հնարավորություն՝ Lounge Key ծրագիր:
4. Ճամփորդության վճարի 50% և ավելի վճարման դեպքում Signature քարտերի համար մինչև 500,000 (հինգ հարյուր հազար), իսկ Infinite քարտերի համար մինչև 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի ապահովագրական ծածկույթ քարտապանի և իր հետ ճամփորդող ընտանիքի անդամների (կին/ամուսին և երեխաներին, մինչև 5 հոգի) համար: Ապահովագրությունը ներառում է բժշկական փոխհատուցում, իրերի կորուստ, չվերթի ուշացում, դժբախտ պատահարներ և այլն:
5. Ապահովագրական ծառայություններ՝ գնումների ապահովագրություն (գնված ապրանքի կորուստի, վնասման և այլն) և երկարացված երաշխիք (բացի արտադրողի կողմից սահմանված երաշխիքից ևս 24 ամիս):
6. Հատուկ զեղչեր և արտոնյալ առաջարկներ ամբողջ աշխարհում:
7. Մինչև 12% արտոնյալ զեղչ Agoda.com (www.agoda.com/visacemea) կայքում ամրագրումների դեպքում
8. VISA Luxury Hotels Collection փաթեթով (www.visaluxuryhotels.com) ամրագրման արտոնյալ պայմանների տրամադրում
9. Մինչև 35% արտոնյալ զեղչ Avis.com (www.avisworld.com/visa) կայքում ավտոմեքենայի վարձակալության համար

10. Global Customer Assistance անհատական ծառայություն. հատուկ իրավիճակներում քարտի շտապ բլոկավորում, քարտի փոխարինում, կանխիկի տրամադրում:
11. Visa քարտերի Premium դասի հավելյալ արտոնությունները և մանրամասն պայմանները՝ https://cis.visa.com/visa-in-armenia/visa-privileges.html կայքում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ